ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԴԱՎԻԹ ԷԴԻԿԻ

# ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՈՒՆԸ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, մունիցիպալ, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АКОПЯН ДАВИД ЭДИКОВИЧ

# КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ ПРОБЛЕМ ПРАВОВОГО СТАТУСА НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ (НА ПРИМЕРЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ)

## АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, муниципальное, европейское право, государственное управление)

ЕРЕВАН - 2025

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում**

Գիտական ղեկավար՝ *իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* **Աշոտ Հայկի Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ *իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* **Հրանուշ Հրանտի Հակոբյան**
*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ* **Տիգրան Աշոտի Խաչիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 12:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հոկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Ջ.Հ. Հայրապետյան**

**Тема диссертации утверждена в Академии государственного управления РА.**

Научный руководитель: *доктор юридических наук, профессор* **Ашот Гайкович Хачатрян**

Официальные оппоненты: *доктор юридических наук, профессор* **Грануш Грантовна Акопян**
*кандидат юридических наук, доцент* **Тигран Ашотович Хачикян**

Ведущая организация: **Ереванский государственный университет**

Защита состоится 15-го ноября 2025 года в 12:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянского университета».

Автореферат разослан 14-го октября 2025 года.

Ученый секретарь специализированного совета,
*кандидат юридических наук* **Дж.А. Айрапетян**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Ներկա աշխարհակարգի պայմաններում պետությունների իրավական և փաստացի կարգավիճակի հիմնահարցերը էլ ավելի են սրվում: Իրավիճակն շատ ավելի բարդ է հատկապես չճանաչված պետությունների պարագայում, քանզի ի տարբերություն ճանաչված պետությունների, վերջինները, որպես կանոն, վերջնական ճշգրտված սահմաններ չունեն, և, այս՝ չճանաչվածության պայմաններում տվյալ պետությունների ժողովուրդների իրավունքների պաշտպանությունն ու հանրային իշխանության մարմինների անցնցում գործունեությունը, մեծ հաշվով, թողնված է տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ուժերի շահերի հավասարակշռությանը: Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների ուսումնասիրության համատեքստում առանձնակի տեղ է զբաղեցնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակը, քանզի վերջինս անկախության երեսուն տարիների ընթացքում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համահունչ բոլոր մակարդակների ընտրություններ կազմակերպելով և անցկացնելով, հանրային իշխանության մարմիններ ձևավորելով ու զարգացնելով, իրավունքահեն ժողովրդավարական արժեքներ ամրապնդելով հանդերձ, ի վերջո, 2023 թվականին հայտնվեց պետության չգոյության վտանգի տակ, իսկ ժողովուրդը ստիպված եղավ բռնի տեղահանվել իր հայրենիքից:

Եթե չճանաչված պետությունների իրավական կարգավիճակը որևէ խնդիր չի հարուցում ազգային մակարդակում, ապա մինչև վերջնական կարգավիճակի որոշումը միջազգային իրավունքի մակարդակում գտնվում են մշտական անորոշության մեջ:

Ընդհանուր առմամբ, վերոգրյալով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը և հատկապես 2023 թվականի արցախցիների բռնի տեղահանումից հետո չճանաչված պետությունների առջև ծառացած գոյաբանական մարտահրավերները գիտական հանրույթի մշտական ուշադրության ներքո պահելու հանգամանքը:

**Գիտական մշակվածության աստիճանը.** Ատենախոսության մեջ օգտագործվել են ինչպես գիտական աշխատություններ՝ մենագրություններ, գիտական ամսագրեր, հոդվածներ, այնպես էլ՝ լրագրողական, հեղինակային նյութեր, նորմատիվ իրավական ակտեր, օրենքներ և այլն: Մասնավորապես, տեսական ուսումնասիրություններից բացի, աշխատության աղբյուր են հանդիսացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության նորմերը, միջազգային իրավական ակտերը, պատմական փաստաթղթերը,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և մի շարք այլ չճանաչված պետությունների ու առաջավոր երկրների օրենսդրությունները, վիճակագրական տվյալները:

Ատենախոսության տեսական հիմքն են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների, մասնավորապես՝ Գ. Հարությունյանի, Ա. Խաչատրյանի, Յու. Բարսեղովի, Ա. Հարությունյանի, Հ. Քոթանջյանի, Մ. Մարգարյանի, Ն. Հովհաննիսյանի, Ա. Մանասյանի, Ս. Մինասյանի, Լ. Շիրինյանի, Շ. Ավագյանի, Վ. Կրիվոպուսկովի, Ս. Քորնելիի, Թ. Դե Վաալի, Ս. Մարկեդոնովի, Ց. Դարիևայի, Ջ. Քրոուֆորդի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Ատենախոսությունն ուղղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակի հետ կապված սահմանադրաիրավական ասպեկտների ուսումնասիրությանը, որը հնարավոր կդարձնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյության հետ կապված իրավական և սահմանադրական խնդիրների վերհանումը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունների ձևակերպումը:

Նշված նպատակին հասնելու համար սահմանվել և լուծվել են հետևյալ գիտական խնդիրները.

1) չճանաչված պետությունների ձևավորման և կայացման իրավական ընդհանուր օրինաչափությունների վերհանում,

2) Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման և զարգացման իրավական, պատմական և ինստիտուցիոնալ ասպեկտների բացահայտում,

3) Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի համատեքստում դրա էության, կառուցվածքի, սոցիալ-քաղաքական և իրավական ակունքների բացահայտում,

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության իրավական ասպեկտների հայեցակարգային և արժեքային, իրավաքաղաքական վերլուծության իրականացում՝ որպես ժողովրդի ուղղակի կամարտահայտման արդյունք,

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների կայացման և զարգացման մակարդակի որոշում,

6) չճանաչված պետություններում ինստիտուցիոնալ կայացման գործընթացում միջազգային իրավունքի դերի նախանշում:

**Հետազոտության գիտական նորույթը.** Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ համակարգված կերպով և միջգիտակարգային համալիր մակարդակով ուսումնասիրության են ենթարկվել չճանաչված պետությունների սահմանադրաիրավական

կարգավիճակին վերաբերող հիմնահարցերը՝ հետազոտության առարկա դիտարկելով սահմանադրահիրավական, միջազգային-իրավական, իրավաքաղաքական և պատմահիրավական բաղադրիչներին առնչվող հիմնախնդիրները: Այս ամենը զուգորդվել է խնդրո առարկա հարցերի առնչությամբ չճանաչված պետությունների սահմանադրահիրավական կարգավիճակի օրինաչափությունների ու առանձնահատկությունների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրահիրավական հարաբերությունների սուբյեկտի բնութագրիչների տեսական հիմնադրույթների վերլուծությամբ, կատարվել եզրահանգումներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում և եզրահանգումներում հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և առաջարկություններում:

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել սահմանադրահիրավական տեսանկյունից՝ պայմանավորված նաև ոչ միայն միջազգային իրավունքի անորոշություններով, այլև նման ճանաչման ազգային մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությամբ, ուստի ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ այդպիսի ճանաչումը կարող է հանդիսանալ ոչ միայն արտաքին քաղաքական ակտ, որի միջոցով պետությունն իր սուվերեն կամքով կլուծի իր իսկ ճանաչման իրավական հարցեր, այլ նաև՝ որպես սահմանադրահիրավական մեխանիզմ, որը կներառի չճանաչված պետությունների նկատմամբ սահմանադրահիրավական մոտեցման հստակ ուղենիշներ:

Եվ քանի որ չճանաչված պետությունների վերջնական կարգավիճակի հարցը պայմանավորված է վերջիններիս ճանաչմամբ, ուստի ատենախոսությամբ հիմնավորվել է հետևյալը, որ՝ յուրաքանչյուր ճանաչված պետության իրավական համակարգում անհրաժեշտ և կարևոր պայման պետք է դիտարկել ներպետական այնպիսի նորմատիվ իրավական ակտի՝ պայմանականորեն «Նոր պետությունների (պետական կազմավորումների) ճանաչման մասին» վերտառությամբ օրենքի առկայությունը, որը կոչված կլինի կարգավորելու սահմանադրական մարմինների (Հանրապետության Նախագահ, Վարչապետ, Ազգային ժողով) մակարդակով միջազգային ճանաչման ոլորտի հարաբերությունները, սահմանելով՝ ա) պետությունների ճանաչման հայեցակարգը, բ) ճանաչման ընթացակարգը, գ) տվյալ սուբյեկտի հետ իրավահարաբերությունների կառուցման ընդհանուր սկզբունքները, դ) ճանաչման իրավական հետևանքները:

2. Նկատի ունենալով այն, որ պետությունների կողմից՝ «Նոր պետությունների (պետական կազմավորումների) ճանաչման մասին» վերտառությամբ օրենքի ընդունումն ու տարածումը, և դրա հիման վրա պետությունների լայն ճանաչումը կարող է հետագայում հանգեցնել ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից համանման փաստաթղթի ընդունմանը, որը կարևոր նշանակություն կարող է ունենալ միջազգային իրավունքի սուբյեկտների ճանաչման հարցերում, ատենախոսությամբ հիմնավորվել է հետևյալը, որ միջազգային ճանաչման ինստիտուտի էության ու իրավական բովանդակության միատեսակ ըմբռնման համար ժամանակակից կառուցակարգերը ակնհայտորեն բավարար չեն, սուբյեկտայնությունը միայն դեֆակտո հանգամանքների արդյունք չէ, այլ այն ենթակա է նաև իրավական համակարգման, ուստի հեղինակի կողմից հիմնավորվել է հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ միջպետական հարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ լուսաբանման, կանոնակարգման և միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման նորմերի ամրագրման նպատակով միջազգային մակարդակում անհրաժեշտ է մշակել միասնական համալիր իրավական փաստաթուղթ, որը կարող է արտացոլել պետությունների ճանաչման բոլոր տեսակների, չափանիշների և ձևերի առանձնահատկությունները, ինչն էլ իր հերթին կբացառի պետությունների տարերայնորեն և իրավիճակային ճանաչման դեպքերը:

3. Կարևորելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական զարգացման էվոլյուցիան և դրա վերլուծությունը՝ անգամ ճանաչման բացակայության պայմաններում, փաստում է, որ հնարավոր է երաշխավորել ու ապահովել դե ֆակտո արդյունավետ պետական կառավարում, եթե առկա են ինստիտուցիոնալ կայունություն, իշխանության ճյուղերի հստակ և գործառնական տարանջատում:

Ուստի կառավարման արդյունավետության իմաստով օրգանական համադրության մեջ քննարկելով չճանաչված պետություններում իշխանության կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության հարցը, ատենախոսությամբ արձանագրվել է, որ հանրային իշխանության մարմինների սահմանադրաիրավական լիազորությունների և պատասխանատվության հստակ հավասարակշռումն ունի կարևոր նշանակություն, ինչը թերևս լավագույնս կարող է իրագործվել հետևյալ դրույթի անշեղ և հետևողական իրականացման արդյունքում, որի էությունը կայանում է հետևյալում՝ չճանաչված պետության կառավարման սուբյեկտներին լայն լիազորություններով օժտելը, առանց պատասխանատվության համապատասխան ծավալի, հատկապես գործող

հակամարտությունների պարագայում, կհանգեցնի կամայականությունների, իսկ բարձր պատասխանատվության պահանջն, առանց համապատասխան իրավունքների տրամադրման վերջին հաշվով կարող է հանգեցնել կառավարման գործունեության խաթարմանը:

4. Միաժամանակ, ելնելով աշխատանքի արդյունքներից, հիմնավորվել է սահմանադրահիրավական այն մոտեցումը, ըստ որի՝ չճանաչված պետության հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց սահմանադրահիրավական հարաբերությունների մասնակիցների հետ հարաբերությունների մեջ մտնելը պայմանավորված չէ պետության միջազգային ճանաչման հանգամանքով, այլ բխում է վերջիններիս սահմանադրական և փաստացի կարգավիճակից:

Ուստի ատենախոսությամբ հիմնավորվել է, որ չճանաչված պետությունը՝ ունենալով սահմանադրություն և գործող պետական ինստիտուտներ, իրականացնում է պետական և հասարակական կյանքի ներքին կանոնակարգում, և նույնիսկ, եթե այդ պետությունը չունի արտաքին ինքնիշխանություն, նրա սահմանադրական համակարգը գործում է դե յուրե և դե ֆակտո, ու սահմանադրահիրավական հարաբերությունների մեջ մտնող մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ բոլոր գործողություններն են, որոնք պետության ներսում և դրանից դուրս իրավաչափորեն կարող են ընկալվել որպես պետության պաշտոնական կամք:

Միաժամանակ, ասվածի համատեքստում հիմնավորվել է նաև այն դիրքորոշումը, որ անկախ արտաքին ճանաչումից պետությունը կարող է գործել որպես սուբյեկտ, եթե ունի ժողովրդի ինքնիշխան կամքի վրա հիմնված իշխանություն, իսկ սահմանադրահիրավական հարաբերությունների մասնակիցների գործողությունները պայմանավորված չեն արտաքին լեգիտիմությամբ, այլ՝ ներքին իրավական համակարգի իրավաչափությամբ և իրավաբանական այդ գործողությունները բավարարում են պետական կամքի ճանաչման ներքին չափանիշին:

5. Հաշվի առնելով այն, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրության համաձայն ժողովրդի կողմից բարձրագույն իշխանության իրականացման ձևեր են հանդիսանում հանրաքվեները և ազատ ընտրությունները, մինչդեռ առանձին և բացառիկ դեպքերում իշխանության իրականացման այդ ձևերը հնարավոր է չապահովեն ցանկալի արդյունավետություն, ուստի հեղինակի կողմից հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխն անհրաժեշտ է լրացնել համապատասխան դրույթով, որը կվերաբերվի «քննարկմանը» որպես հանրապետական և տեղական մակարդակներում հանրային իշխանության

իրականացման ուղղակի ժողովրդավարական ձև: Իսկ Սահմանադրության այդ նորմի հիման վրա ընդունվի «Պետական և հասարակական կյանքին վերաբերվող կարևորագույն հարցերի համաժողովրդական քննարկման մասին» օրենք, որում պետք է ներառվեն ինչպես համաժողովրդական քննարկումների կազմակերպման կարգը, այլև այն հարցերի շրջանակը, որոնք ենթակա են համաժողովրդական քննարկման, ինչպես նաև այդ քննարկման արդյունքների իրավաբանորեն ամրագրման ընթացակարգերը և հետևանքները:

6. Ուսումնասիրելով չճանաչված պետությունների չկարգավորված կոնֆլիկտները և աշխարհի այս կամ այն կետում իրադրության ապակայունացման հարցերը, ատենախոսությամբ փաստվել է այն թեզը, ըստ որի՝ կոնֆլիկտների միջազգայնացմամբ և դրանով պայմանավորված ինքնորոշման ձգտող տարածքի անկախությունը ճանաչող և չճանաչող պետությունների հարաբերություններում ստեղծվում են նոր կոնֆլիկտոգեն իրավիճակներ: Չնայած նրան, որ միջազգային իրավունքի հիմնարար աղբյուրները (ՄԱԿ-ի կանոնադրություն և այլ միջազգային դաշնագրեր) ճանաչում են ազգերի ինքնորոշման իրավունքը, մինչդեռ այն իրականում միջազգային հանրության կողմից կիրառվում է ընտրողաբար, ըստ քաղաքական, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային շահերի: Ինչ վերաբերում է առանձին չճանաչված պետությունների անկախության ճանաչմանը (օր. Կոսովո), ապա ատենախոսությամբ արձանագրվել է, որ ազգերի ու ժողովուրդների ինքնորոշման համանման գործընթացներում մյուս չճանաչված պետությունների (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա) ճանաչման բացակայությունը վկայում է, որ ինքնորոշումը՝ ոչ թե իրավական, այլ քաղաքականապես պայմանավորված հնարավորություն է:

Այստեղից, ատենախոսությամբ հիմնավորվել է այն մոտեցումը, որ ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային հանրության կողմից ընկալվում է ոչ թե որպես իրավաբանորեն երաշխավորված իրավունք, այլ ընդամենը որպես ազգերի կողմից պետություն ստեղծելու հնարավորություն: Այդ մոտեցումն ապացուցում է նաև, որ անկախության ճանաչման խնդիրը պետք է դիտարկել ոչ միայն իրավական, այլև քաղաքական տեսանկյունից:

7. Վերլուծելով նոր պետությունների առաջացման ճանապարհների պատմահրավական ընթացքը, հեղինակի կողմից հիմնավորվել է այն թեզը, որ այդպիսի ճանապարհները երեքն են ՝ տարածքների անջատում (secession) (Կոսովո) կամ իրրեդենտիզմ (irredentism) (Քուրդիստան), կամ պետությունների (ինչպես Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի դեպքում), գաղութային կայսրությունների (Օսմանյան կայսրություն) փլուզում (decolonization), որոնց արդյունքում յուրաքանչյուրն ընտրում է

սահմանադրահիրավական ինքնության հաստատման և միջազգային իրավունքի սուբյեկտայնության տարբեր մեխանիզմ: Ելնելով այս թեզի բովանդակային նշանակությունից ատենախոսությամբ հիմնավորվել է հետևյալ դիրքորոշումը, ըստ որի՝ չճանաչված պետություններն իրենց բնույթով գտնվում են իրավաբանորեն լիարժեք ճանաչման յուրօրինակ անցումային փուլում, «դե ֆակտո» պետականության և «դե յուրե» միջազգային սուբյեկտայնության միջև, որն իրավական տեսանկյունից պետության վերջնական իրավական կարգավիճակի միջանկյալ փուլ է հանդիսանում: Այն, որպես այդպիսին, դիտվում է միջանկյալ կարգավիճակ, որտեղ սահմանադրահիրավական ինստիտուտները դառնում են ինքնության պահպանման ու կառուցման և միջազգային իրավունքի հետ հնարավոր ինտեգրման գործիք, իսկ այդպիսի անցումայնության պայմաններում ստեղծված սահմանադրական համակարգերն արտացոլում են պետականության ձգտման իրավաքաղաքական կամքը և լեգիտիմացման ռազմավարությունը:

**Հետազոտության մեթոդաբանությունը.** Ուսումնասիրության մեթոդական հիմքը կազմում է ճանաչողության ընդհանուր գիտական դիալեկտիկական մեթոդը և դրանից բխող մասնավոր գիտական մեթոդները: Ատենախոսության մեջ օգտագործվել են համեմատական, պատմական, համակարգային, պատմական-իրավական, իրավաքաղաքական, սահմանադրական-իրավական, վիճակագրական և վերլուծության այլ մեթոդներ՝ հիմնականում ինստիտուցիոնալ մեթոդի և ռացիոնալ ընտրության մեթոդի կիրառմամբ: Վերոնշյալ խնդիրների լուծման ժամանակ կիրառվել են ինստիտուցիոնալ, սոցիոլոգիական, պատմահամեմատական, արժեքային և համակարգահամեմատական մոտեցումներ:

**Հետազոտության օբյեկտը.** Հետազոտության օբյեկտը չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնահարցերն են:

**Հետազոտության առարկան.** Հետազոտության առարկան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակի հիմնախնդիրների ինստիտուցիոնալ, իրավաքաղաքական, սահմանադրահիրավական ասպեկտների ամբողջությունն է:

**Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը**. Տեսական տեսանկյունից աշխատությունում ձևակերպված չճանաչված պետությունների, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակի հայեցակարգային հիմնախնդիրները և լուծման առաջարկված եղանակները հիմնարար նշանակություն ունեն, հատկապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրահիրավական

կարգավիճակի հստակեցման տեսանկյունից: Ավելին, հետազոտությունը որոշակի չափով լրացնում է իրավաբանական գրականության այն բացը, որը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակի ինստիտուցիոնալ և սահմանադրաիրավական խնդիրների ուսումնասիրման համալիր տեսությանը և մեթոդաբանությանը՝ պետության կայացման և զարգացման առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից: Կիրառական տեսանկյունից հարկ է նշել այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակի գնահատումը պետք է որոշվի նրանով, թե որքանով էր վերջինը գործառնական տեսանկյունից համահունչ միջազգային իրավունքի կողմից կայացած սուբյեկտի կարգավիճակ ունեցող պետության առաջադրվող պահանջներին: Բացի դա, կարևոր է նաև քննարկման առարկա դարձնել, թե արդյո՞ք ձևավորման առաջին իսկ պահից տվյալ պետության իրավական համակարգը նպաստել է սահմանադրորեն ամրագրված պետության բնութագրիչների կյանքի կոչելուն:

**Ատենախոսության հիմնական դրույթները** կարող են օգտագործվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական կարգավիճակին վերաբերող այլ հետազոտությունների ընթացքում: Բացի դա, աշխատանքը կարող է օգտակար լինել նաև այլ չճանաչված պետություններում ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ պետությունների ինստիտուցիոնալ շինարարության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական աշխատանքների համար:

**Հետազոտության աղբյուրագիտական բազան.** Ատենախոսության պատրաստման ընթացքում օգտագործվել են ավելի քան հարյուր հիսուն աղբյուրներ, այդ թվում՝ իրավական ակտեր, մենագրություններ, տեսական և լրագրողական հոդվածներ, փաստաթղթեր, տեղեկատվական հաղորդագրություններ:

**Հետազոտական աշխատանքի ապրոբացիան.** Ատենախոսությունը քննարկվել է Արցախի պետական համալսարանի «Իրավունքի» ամբիոնում: 2023 թվականի հոկտեմբերից ատենախոսությունը քննարկվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի «Իրավագիտության» և Հայ-ռուսական համալսարանի «Պետության և իրավունքի տեսության ու սահմանադրական իրավունքի» ամբիոններում: Սկսած 2009 թվականից ատենախոսության մի շարք դրույթներ դասավանդվում են հետազոտության հեղինակի կողմից իրականացվող դասախոսությունների ընթացքում, իսկ ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից տպագրված թվով վեց հոդվածներում և զեկուցվել են մի շարք հանրապետական և միջազգային նշանակության գիտաժողովներում:

**Ատենախոսության կառուցվածքը.** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց մեջ ամփոփում են տասնմեկ ենթագլուխ, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ ներկայացվել են հետազոտական թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «**Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները**» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

**«Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափությունները»** 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել են չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափությունները, մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի իրացման դեպքերը:

«**Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները**» 1.2 պարագրաֆում ուսումնասիրվել է չճանաչված պետության հիմնախնդիրը, մասնավորապես փորձ է արվել բացահայտել «չճանաչված պետություն» հասկացության բովանդակային տարրերը:

«**Չճանաչված պետությունները որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների գործոն**» 1.3 պարագրաֆում չճանաչված պետությունների հիմնախնդիրը ներկայացվել է որպես համաշխարհային քաղաքական գործընթացի զարգացման և ազդեցության ժամանակակից իրավական և քաղաքական մտքի կարևորագույն ուղղություններից մեկը: Անդրադարձ է կատարվել ազգերի իքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների փոխհարաբերակցության խնդրին:

Ատենախոսության երկրորդ՝ «**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը**» վերտառությամբ գլուխը բաղկացած է հինգ պարագրաֆներից:

«**Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ**» 2.1 պարագրաֆում քննարկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի և որպես ամբողջ հասարակության ու ժողովրդի քաղաքական կազմակերպության՝ հասարակական հարաբերությունների մասնակցի կարգավիճակի հարցը:

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը, էությունը և կառուցվածքը»** 2.2 պարագրաֆում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահամանդրաիրավական կարգավիճակը դիտարկվել է նաև որպես սահամադրաիրավական համալիր ինստիտուտ:

Քննարկման առարկա է դարձվել գրականության մեջ ընդունված պետության ընդհանուր և հատուկ կարգավիճակ հասկացությունների տարբերակման հարցը:

Անդրադարձ է կատարվել նաև պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի իրավասուբյեկտության հարցին:

«**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խնդիրները, նպատակները, ֆունկցիաները և դրանց սահմանադրական ամրագրումը**» 2.3 պարագրաֆում ուսումնասիրվել է պետության՝ որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի լիազորությունների իրականացումը:

Քննարկվել է սահմանադրությամբ ամրագրված պետության խնդիրները, նպատակները: Առանձին անդրադարձ է կատարվել պետության իրավունքներին ու պարտականություններին որպես նրա գործունեության հնարավոր կամ անհրաժեշտ չափի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական լիազորություններին: Ուսումնասիրվել է սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների հետ հարաբերություններում պետության սահմանադրաիրավական պատասխանատվության խնդիրը:

«**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների իրագործմանն ուղղված պետության սահմանադրական լիազորությունները**» 2.4 պարագրաֆում ի մասնավորի քննարկվում են սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված նորմերի գործնական նշանակությունը, պետության հիմնական բնութագրիչ գծերը: Անդրադարձել ենք սահմանադրական կարգի հասկացութան խնդիրներին դրանցում համընդհանրության ու կոնկրետության արտացոլման համատեքստում,

ինչպես նաև «սահմանադրական կարգ» և «սահմանադրական կարգի հիմունքներ» հասկացությունների բովանդակային ընդհանրություններին և առանձնահատկություններին:

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիազորություններն ու խնդիրները քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում»** 2.5 պարագրաֆում վեր են լուծվել քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտում պետության խնդիրները, քննարկվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում սոցիալական կառավարման օբյեկտիվ օրինաչափությունների իրագործման, ժողովրդավարության իրականացման ուղղակի և ներկայացուցչական ձևի հարցերը:

Ուսումնասիրվել են կառավարման սուբյեկտների լիազորությունների, իշխանության կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության բնույթն ու իրագործման մեխանիզմները: Առանձին անդրադարձ է կատարվել տնտեսության, դրա զարգացման բնութագրիչներին վերաբերվող հարցերին:

Ատենախոսության երրորդ՝ «**Չճանաչված պետություններն Անդրկովկասում. իրավական կարգավիճակ և ճանաչման հեռանկարներ**» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

«**Անդրկովկասի չճանաչված պետությունների կազմավորման առանձնահատկությունները**» 3.1 պարագրաֆում քննարկվել են Անդրկովկասի չճանաչված պետությունների ձևավորման գործոնները, դրանց նմանություններն ու տարբերությունները:

«**Անդրկովկասի չճանաչված պետությունների ճանաչման հեռանկարները**» 3.2 պարագրաֆում քննարկվել են Անդրկովկասի չճանաչված պետությունների անցումային կարգավիճակը, ճանաչման խնդիրները, կարգավիճակի փոփոխության հեռանկարները: Կարևորվել է նաև միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման միասնական համալիր իրավական փաստաթուղթ մշակելու անհրաժեշտության հարցը:

«**Անդրակովկասյան հակամարտությունները և Ղարաբաղյան պետության ֆունկցիաների իրականացումը՝ բռնի տեղահանման համատեքստում**» 3.3 պարագրաֆում հետազոտման առարկա են դարձել այն Անդրկովկասյան հակամարտությունները, որոնց արդյունքում առաջացել են Անդրկովկասի չճանաչված պետությունները:

Առանձին անդրադարձ է կատարվել ԽՍՀՄ փլուզման արդյունքում Անդրկովկասում առաջացած երեք չճանաչված պետություններին և մասնավորապես նաև Արցախի Հանրապետության հանրային իշխանության մարմինների գործառույթներին 2023 թվականի բռնի տեղահանման համատեքստում:

**Ատենախոսության եզրակացությունում արված եզարահանգումները** հետևյալներն են.

1. Չնայած հակամարտությունների խաղաղ կարգավորման բազմաթիվ փորձերին, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների միջնորդությանը, կայուն խաղաղությունը մնում է անհասանելի՝ ինչը պայմանավորված է ինչպես հակամարտող երկրների ներքին քաղաքական գործոններով, այնպես էլ արտաքին աշխարհաքաղաքական շահերով:

2. Ներկա իրականությունում գոյություն ունեն չճանաչված պետություններ, որոնց կարգավիճակը հստակեցված չէ, սակայն դա չի խանգարում վերջիններիս գոյությանը: Ավելին, նմանատիպ պետությունները հանդիսանում են լիովին կայացած պետություններ, ունեն արդյունավետ կառավարման ապարատ, որը վայելում է տվյալ պետության բնակչության վստահությունը:

3. Միջազգային հանրության կողմից նոր կազմավորվող (ճանաչվող) պետությունների միջազգային-իրավական ճանաչման միասնական մեխանիզմի մշակումը կնպաստի չճանաչված պետությունների ինտեգրմանը միջազգային կազմակերպություններին՝ մոտեցնելով վերջինների անկախությունը:

4. Չճանաչված պետությունների տարբերակիչ հիմնական առանձնահատկություններ են հանդիսանում՝ պետականության հատկանիշների փաստացի առկայությունը, «մետրոպոլ» պետության և ինքնորոշման միջոցով անկախ պետություն ստեղծելուն ձգտող ժողովրդի միջև կոնֆլիկտի առկայությունը, բոլոր պետությունների (չճանաչված) և պետությունների մեծ մասի կողմից (մասնակի ճանաչված) ճանաչման բացակայությունը:

5. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի՝ Մալիի Հանրապետության և Բուրկինա Ֆասո միջև վեճով 1986 թվականի դեկտեմբերի 22-ի իր որոշմամբ uti-possidetis սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումը նոր ձևավորվող պետությունների կայունությանը և անկախությանը սպառնացող վտանգի վերաբերյալ՝ պետք է կիրառելի դարձնել բոլոր չճանաչված պետությունների դեպքում:

6. Չճանաչված պետություններն իրենց բնույթով գտնվում են իրավաբանորեն լիարժեք ճանաչման յուրօրինակ անցումային փուլում: Նոր պետություններն առաջանում են տարածքների անջատման (Կոսովո) կամ իրredենտիզմի (Քուրդիստան), պետությունների (ինչպես Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի դեպքում) կամ գաղութային կայսրությունների (Օսմանյան կայսրություն) փլուզման արդյունքում:

7. Միջազգային իրավունքում գոյություն չունի այնպիսի մարմին, որը պետությանը կարող է օժտել միջազգային իրավասուբյեկտությամբ: Նորաստեղծ պետության ճանաչումը ճանաչող պետությունների իրավասու մարմինների ինքնիշխան որոշումն է: Առանց ակնհայտ արտահայտված կամ կոնկլյուդենտ գործողությունների միջոցով տրված համաձայնության՝ չի կարող փաստվել, որ ճանաչումը տեղի է ունեցել:

8. Չճանաչված պետությունների չկարգավորված կոնֆլիկներին և աշխարհի այս կամ այն կետում իրադրության ապակայունացմանը գումարվում է այդ կոնֆլիկտների միջազգայնացումը, որն էլ իր հերթին լրացուցիչ լարվածություն է ստեղծում ինքնորոշման ձգտող տարածքի անկախությունը ճանաչող և չճանաչող պետությունների հարաբերություններում:

9. Ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային հանրության կողմից ընկալվում է ոչ թե որպես իրավունք, այլ ընդամենը որպես ազգերի կողմից պետություն ստեղծելու հնարավորություն: Այդ մոտեցումն ապացուցում է նաև, որ անկախության ճանաչման խնդիրը պետք է դիտարկել ոչ միայն իրավական, այլև քաղաքական տեսանկյունից:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ, իրենից ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ հասարակության և ժողովրդի քաղաքական կազմակերպություն, մտնելով պետական իշխանության բոլոր մարմինների համակարգի մեջ, որոնք իրականացնում են պետության՝ որպես ժողովրդաիշխանության կարևորագույն ձևի ֆունկցիաներն ու լիազորությունները, կենսագործելով պետության սոցիալական նշանակությունը և կատարելով նրա դերը մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման բնագավառում:

11. Ի տարբերություն ժողովրդի որպես սահմանադրական իրավունքի սուբյեկտի, հասարակությունը չունի հստակ ընդգծված սահմանադրական կարգավիճակ, թեկուզ պետությունը հանդիսանում է հասարակության քաղաքական կազմակերպություն:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (պետության) սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնական էությունը կայանում է պետության և ժողովրդի փոխհարաբերության միջոցով վերջինիս հիմնական խնդիրների, նպատակների, գործառույթների, իրավազորության իրականացումը:

13. Պետության սահմանադրաիրավական իրավասուբյեկտությունն իրականացնող ոչ բոլոր պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք

են սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակից դառնալու պարագայում, հանդես գալիս պետության անունից:

14. Պետության սահմանադրաիրավական պատասխանատվությունը ենթադրում է ժողովրդի կողմից պետական իշխանության՝ հատկապես պետական իշխանության բարձրագույն մարմինների և բարձրագույն պաշտոնատար անձանց վրա ներգործելու հնարավորություն, որոնք հիմնականում իրականացնում են պետության ինքնիշխան իրավունքները: Ժողովրդի կողմից պետության նկատմամբ՝ ի դեմս նրա բարձրագույն մարմինների և պաշտոնատար անձանց, պատասխանատվության նման միջոցների կիռարումը պետության սահմանադրաիրավական պատասխանատվության մեխանիզմը դարձնում է իրական:

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները, որպես սահմանադրական ինստիտուտ, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, Սահմանադրության համակարգված նորմեր են, որոնք ամրագրում են ժողովրդավարական արժեքների և գաղափարների վրա հիմնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակության և պետության, քաղաքական, տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական հիմնադրույթները:

16. Հաշվի առնելով ժամանակակից պահանջներն ու իրողությունները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակը կարող ենք նշել, որ բոլոր ռազմավարական այն որոշումները, որոնք առնչվում են հասարակության ընդհանուր շահերին, պետք է դրվեն համաժողովրդական քննարկման:

17. Կառավարման սուբյեկտներին լայն լիազորություններով օժտելը, առանց պատասխանատվության համապատասխան ծավալի, հատկապես չճանաչվածության և գործող հակամարտությունների պարագայում, կհանգեցնի կամայականությունների, իսկ բարձր պատասխանատվության պահանջն, առանց համապատասխան իրավունքների տրամադրման խոչնդոտում է նախաձեռնողականության դրսևորմանը, և վերջին հաշվով հանգեցնում է վերջինիս գործունեության խաթարմանը:

18. Այս կամ այն բացասական երևույթներն էական առումով պայմանավորված են իշխանական փոխհարաբերությունների բնույթով և սահմանադրորեն դրանց ոչ լիարժեք կարգավորվածությամբ: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականին ընդունված Սահմանադրության մեջ նշված բացթողումներն ակնհայտ են՝

1) իշխանությունների բաժանման համակարգում հանրապետության Նախագահի կարգավիճակի

անորոշությունը, ով թեկուզ ձևականորեն հանդիսանում է պետության գլուխը, սակայն փաստացիորեն օժտված է գործադիր իշխանության գլխին առանձնահատուկ «դասական» լիազորություններով,

2) հանրապետության Նախագահի լիազորությունների ամրագրման անհամաչափությունը նրա պատասխանատվության ծավալին,

3) Ազգային ժողովի լիազորությունների սահմանափակումն և կառավարության էական կախվածությունը երկրի Նախագահից,

19. Որպեսզի պարզենք, թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական որ հարաբերությունները կարող են դառնալ սահմանադրաիրավական կարգավորման առարկա և ձևակերպենք կոնկրետ առաջարկներ Սահմանադրության և սահմանադրական իրավունքի այլ աղբյուրների կատարելագործման վերաբերյալ, անհրաժեշտ է ամենից առաջ՝

1) հաշվի առնելով հայրենական և արտասահմանյան փորձը, պարզել հասարակության զարգացման ոլորտում տնտեսության դերը, վերջինիս կապը հասարակական կյանքի այլ ոլորտների հետ, ինչը թույլ կտա որոշելու տնտեսության մեջ պետության միջամտության բնույթն ու չափը և պետության տնտեսական ֆունկցիայի հիմնական բովանդակությունը, ինչպես նաև վերջինիս պետա-իրավական կարգավորման անհրաժեշտությունը,

2) այդ տեսանկյունից վերլուծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և արտասահմանյան երկրների սահմանադրաիրավական փորձը,

3) հաշվի առնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհաքաղաքական հետաքրքրությունները, տնտեսական զարգացման վիճակը և առանձնահատկությունները, որոնք ունակ են ունենալու ինչպես բացասական այնպես էլ դրական ազդեցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև սահմանադրական իրավունքի խթանող նորմերի հնարավորությունները, որոնք կոչված են ամրագրելու տնտեսական զարգացման ելակետային սկզբունքները, ստեղծել իրավական բազա իրավունքի այլ ճյուղերի նորմերով դրանց ավելի մանրամասն կարգավորման համար:

20. ԽՍՀՄ ապագա գերտերության ձևավորման հիմքում «դրվեցին բազմաթիվ ականներ», որոնք հետագայում սկսեցին «պայթել» նրա հարավային սահմանների երկայնքով: Երբ այն ստեղծվեց, քարտեզի վրա վերջինիս վարչական սահմանները գծվեցին առանց հաշվի առնելու որոշ պատմական, իրավաքաղաքական, ազգային առանձնահատկություններ (Լեռնային Ղարաբաղը, որը բնակեցված է մեծամասամբ հայերով դարձավ Ադրբեջանի Հանրապետության ինքնավար մարզ, Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնավար հանրապետությունները ներառվեցին Վրացական ԽՍՀ կազմի մեջ):

21. Անկախ ստեղծված իրավիճակից, ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված չճանաչված կամ մասամբ ճանաչված պետությունների հետ՝ որպես գործոնի, պետք է հաշվի նստեն ոչ միայն այդ տարածքներին հավակնող պետությունները, տարածաշրջանի պետությունները, այլև միջազգային իրավունքի մնացյալ ակտիվ դերակատարները:

22. Պետք է նկատել, որ Անդրկովկասում չճանաչված պետությունների ձևավորման գործոնները համեմատաբար նման են: Բոլոր դեպքերում նկատվել է նոր ազգային պետության կենտրոնական իշխանության մերժումը ճանաչել «իր» տարածքի մի մասի ինքնավարությունը: Ադրբեջանը մերժեց ճանաչել Լեռնային Ղարաբաղի ինքնիշխանությունը, վերացրեց նրա ինքնավարությունը, նույն կերպ Վրաստանը վերացրեց Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնավարությունները:

23. Ադրբեջանի և Վրաստանի նախկին ինքնավար մարզերը հանգեցին անկախ պետությունների ստեղծման որոշման, որի արդյունքում էլ նվաճեցին իրական, բայց չճանաչված ինքնիշխանություն:

24. Խորհրդային ղեկավարության քաղաքականության արդյունքում Անդրկովկասի չճանաչված պետությունների տարածքները հայտնվել են տվյալ «մետրոպոլիաների» տիրապետության տակ: Նշանակում է Անդրկովկասի չճանաչված պետությունների պատկանելությունը Վրաստանին և Ադրբեջանին վիճելի հարցեր են, որի լուծմանն այսօր փորձում են հասնել Աբխազիան, Հարավային Օսիան և Լեռնային Ղարաբաղը:

25. Միջպետական հարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ լուսաբանման, կանոնակարգման և միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման նորմերի ամրագրման նպատակով անհրաժեշտ է մշակել միասնական համալիր իրավական փաստաթուղթ, որը կարող է արտացոլել պետությունների ճանաչման բոլոր տեսակների, չափանիշների և ձևերի առանձնահատկությունները:

26. Կոսովոյի ճանաչման գործընթացը ժխտեց այն թեզը, համաձայն որի՝ միջազգային իրավունքի դերակատարները մինչ այդ առաջնորդվել էին բացառապես պետության տարածքային ամբողջականության սկզբունքով: Կոսովոն օգտվեց ժողովրդի ինքնորոշման իր իրավունքից՝ հավասարության նշան դնելով, տարածքային ամբողջականության և ժողովրդի ինքնորոշման սկզբունքների միջև: Բացի դա, Կոսովոյի օրինակը վերոնշյալ սկզբունքների հավասարությունը հստակ ընդգծելուն զուգահեռ, հերքեց այն տեսությունը, որ նույն ժողովուրդը չի կարող ինքնորոշվել մեկից ավելի անգամ:

27. Նոր պետությունների ճանաչման հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար նախ և առաջ անհրաժեշտ է մշակել արդյունավետ գործող նորմատիվ-իրավական բազա և դրա իրավակիրառ մեխանիզմներ՝ դրանք կիրառելով ճանաչման կարիք ունեցող պետությունների նկատմամբ:

28. Միջազգային ճանաչման իրավական ինստիտուտի բնույթի բարդությունը կայանում է նրանում, որ միջազգային հարաբերությունների մշտական բարդացման հետ մեկտեղ մեծանում է նաև դրանց շուտափույթ իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Այստեղ գլխավոր դերը, համապատասխան իրավական խնդիրները լուծելու համար, իհարկե, պետք է պատկանի ՄԱԿ-ի մակարդակով իրականացված կոդիֆիկացմանը՝ հաշվի առնելով զարգացման որոշակի փուլում առկա քաղաքական իրավիճակը:

**Ատենախոսության հավելվածում** ներկայացվել է չճանաչված պետությունների ոչ սպառիչ ցանկը, այդ պետությունների անկախության հռչակման ամսաթիվը և տվյալ չճանաչված պետության վերաբերյալ համառոտ տեղեկություններ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.**

1. Հակոբյան Դ., «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ», Արցախի պետական համալսարան, Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ 2013, 237-248 էջեր:

2. Հակոբյան Դ., «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի, լիազորություններն ու պատասխանատվությունը մարդու և քաղաքացու հետ հարաբերություններում», Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ, 1/2015, Ստեփանակերտ 2015, 319-323 էջեր:

3. Հակոբյան Դ., «Արցախի Հանրապետության խնդիրներն ու նպատակները, դրանց սահմանադրական ամրագրումը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու,1 (1) 2018, Երևան 2018, 154-165 էջեր:

4. Հակոբյան Դ., «Սահմանադրական կարգի հիմունքները որպես Արցախի Հանրապետության սահմանադրական կարևոր ինստիտուտ», «Եվրոպական Համալսարան» Գիտական հոդվածների ժողովածու 13 (01), Երևան 2022, 167-174 էջեր:

5. Հակոբյան Դ., «Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները», ՀՀ սահմանադրական դատարան «Տեղեկագիր» թիվ 2 (114), Երևան 2024, 163-179 էջեր:

6. Հակոբյան Դ., «Սահմանադրական կարգի հասկացության խնդիրները դրանցում համընդհանրության ու կոնկրետության արտացոլման համատեքստում», ՀՀ սահմանադրական դատարան «Տեղեկագիր» թիվ 1 (118),Երևան 2025, 123-131 էջեր:

7.Հակոբյան Դ., «Պետությունների ճանաչման ազգային մեխանիզմների ձևավորման որոշ հիմնախնդիրների մասին» ՀՀ սահմանադրական դատարան «Տեղեկագիր» թիվ 3 (120),Երևան 2025, 197-209 էջեր:

**АКОПЯН ДАВИД ЭДИКОВИЧ**

# КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ ПРОБЛЕМ ПРАВОВОГО СТАТУСА НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ (НА ПРИМЕРЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ)

Исследовательская работа посвящена конституционно-правовому исследованию проблем правового статуса непризнанных государств, посредством которого впервые в конституционно-правовой науке была предпринята попытка всестороннего изучения конституционно-правового статуса непризнанных государств, выявления с конституционно-правовой точки зрения особенностей образования непризнанных государств, организации институтов государственной власти, а также их международного и внутреннего правового статуса на примере конституционного развития Нагорно-Карабахской Республики.

Проблема непризнанных государств и их влияние на развитие мирового политического процесса стали одним из важнейших направлений современной правовой и политической мысли. В основе исследования лежит изучение конституционного опыта непризнанных государств, в частности Нагорно-Карабахской Республики, который рассматривается в сочетании с конституционными моделями других непризнанных (закавказских) государств (Абхазия, Южная Осетия).

В исследовательской работе проблема правового статуса непризнанных государств рассматривалась, в частности, в аспекте следующих общих закономерностей правового статуса непризнанных государств, их особенностей. Для более глубокого раскрытия понятия “непризнанное государство” были выделены отличительные черты такого государства, приведенные отдельными исследователями. Было дано обоснование того, что непризнанные государства фактически имеют все признаки, закрепленными в Конвенции Монтевидео о правах и обязанностях государств 1933 года, а именно, следующие четыре признака: постоянное население, определенная территория, правительство и возможность вступать в отношения с другими государствами.

Был рассмотрен конституционно-правовой статус Нагорно-Карабахской Республики как субъекта конституционного права и конституционно-правовых отношений, была предпринята попытка дать определение этого статуса, обратиться к сущности и структуре статуса,

проблемам государства. Были рассмотрены также вопросы относительно сущности конституционно-правовой ответственности государства и ее особенностей.

Отдельно были затронуты историко-правовые основы образования и особенности непризнанных государств Закавказья, перспективы их признания, проанализированы закавказские конфликты.

В результате исследования мы пришли к выводу, что непризнанные государства, не являясь полноправными субъектами международного права, выполняют все основные функции суверенной государственной власти, имея в основе собственные конституции. А конституционные регулирования становятся правовой основой существования непризнанных государств, обеспечивая стабильное функционирование государственных институтов и являясь внутренним источником легитимности власти.

Результаты исследования имеют как теоретическое, так и практическое значение, способствуя расширению научных обсуждений о конституционно-правовом статусе непризнанных государств и совершенствованию политико-правовых подходов к мирному урегулированию.

В целом, проведенное исследование показывает, что конституционно-правовой статус непризнанных государств является особой правовой системой между конституционным и международным правом и государственным суверенитетом.

DAVID EDIK HAKOBYAN

# CONSTITUTIONAL AND LEGAL RESEARCH OF THE ISSUES OF THE LEGAL STATUS OF UNRECOGNIZED STATES ON THE EXAMPLE OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

The research is dedicated to the constitutional and legal study of the issues of the legal status of unrecognized states, through which, for the first time in constitutional and legal science, an attempt has been made to comprehensively examine the constitutional and legal status of unrecognized states, in order to reveal from a constitutional and legal perspective the features of the formation of unrecognized states, the organization of institutions of state power, as well as their international and domestic legal status using the example of constitutional development of Nagorno-Karabakh Republic.

The problem of unrecognized states and their influence on the development of the global political process have become one of the most important directions of modern legal and political thought. The research is based on the examination of the constitutional experience of unrecognized states, in particular, the Nagorno-Karabakh Republic, which is considered in conjunction with the constitutional models of other unrecognized "Transcaucasian" states (Abkhazia, South Ossetia).

In the research, the issue of the legal status of unrecognized states was considered in particular from the following aspects: general patterns of the legal status of unrecognized states and their peculiarities. For more profound analysis of the concept of "unrecognized state", the distinctive features of such a state given by individual researchers were highlighted as well. The justification was put forward that unrecognized states actually have all the features that are prescribed in the 1933 Montevideo Convention on the Rights and Duties of States, more specifically, the following four features: permanent population, a certain territory, a government, and the ability to enter into relations with other states.

The constitutional and legal status of Nagorno-Karabakh Republic as a subject of constitutional law and constitutional and legal relations was considered, an attempt was made to provide a definition of this status, to reflect on the essence and structure of the status, and the problems of the state. Issues regarding the essence of the constitutional and legal responsibility of the state and its peculiarities were also discussed.

The historical and legal foundations, features and prospects of recognizing the formation of the unrecognized states of Transcaucasia were separately touched upon, and the Transcaucasian conflicts were analyzed.

As a result of the research, we have come to the conclusion that unrecognized states, while not being full-fledged subjects of international law, carry out all the basic functions of sovereign state power, based on their own constitutions. And constitutional regulations become the legal basis for the existence of unrecognized states, ensuring the stable operation of state institutions and being an internal source of legitimacy of power.

The results of the research have both theoretical and practical significance, contributing to the expansion of scientific discussions on the constitutional and legal status of unrecognized states and the improvement of legal and political approaches to peaceful settlement.

In general, the conducted research shows that the constitutional and legal status of unrecognized states is a unique legal system located between constitutional and international law and state sovereignty.